

ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ
ΕΝΙΑΙΕΣ ΤΕΛΙΚΕΣ ΠΡΟΑΓΩΓΙΚΕΣ ΓΡΑΠΤΕΣ ΕΞΕΤΑΣΕΙΣ 2023-2024
Α΄ ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ
ΗΜΕΡΟΜΗΝΙΑ: 24 Μαΐου 2024
ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ
Α΄ ΣΕΙΡΑ
ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Α012
ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά
ΤΟ ΕΞΕΤΑΣΤΙΚΟ ΔΟΚΙΜΙΟ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΕΞΙ (6) ΣΕΛΙΔΕΣ


ΟΔΗΓΙΕΣ (για τους εξεταζόμενους)

1. Στο εξώφυλλο του τετραδίου απαντήσεων να συμπληρώσετε όλα τα κενά με τα στοιχεία που ζητούνται.
2. **Να απαντήσετε ΟΛΑ τα ερωτήματα.**
3. **Να μην αντιγράψετε τα θέματα** στο τετράδιο απαντήσεων.
4. Να μη γράψετε πουθενά στις απαντήσεις σας **το όνομά σας**.
5. Να απαντήσετε στο τετράδιό σας σε όλα τα θέματα **μόνο με μπλε πένα ανεξίτηλης μελάνης**. Μολύβι επιτρέπεται, μόνο αν το ζητάει η εκφώνηση και μόνο για πίνακες, διαγράμματα κ.λπ.
6. Απαγορεύεται η χρήση διορθωτικού υγρού ή διορθωτικής ταινίας.

1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵՉՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացեք հետևեալ հատուածը եւ պատասխանեցեք հարցումներուն:

<< ԱՐԱՉԸ >>



Գարնան վերջն էր, արիւն-քրտիկը թափելու օրեր: Գիւղը տքնում էր. փոքրիկ մանուկներին էլ չէին խնայում: Դաշտերում, այգիներում, բանջարանոցներում կեանքը եռում էր, ամեն կողմ ծռուած մեջքեր, քրտնաթոռ ճակատներ, արեւի առաջ չորցած, տանջուած դէմքեր:

Գալօն էլ դադար չունէր: Ընտանիքը մեծ չէր՝ ինքը, կինը, եւ փոքրիկ աղջիկը՝ ինը տարեկան Շողիկը: Էլի երեք բերան էր, պէտք էր կերակրել, իսկ ձմեռը գիւղում կատակ չի անում:

Գալօն ողջ օրը քաղհան էր անում, կնոջ եւ Շողիկի հետ բամպակի արտն էին քաղհանում: Փոքր էր արտը, բայց թէ որ ժամանակին քաղհանուի, մանաւանդ ջրից չգրկուի, երկինքն էլ կարկուտ չտայ, Գալօն էլի մի տարի գլուխ կը հանի՝ առանց ուրիշի ձեռքին նայելու:

Քաղհանը տղամարդի գործ չէ, բայց հեշտ էլ գործ չէ: Գալօն ամբողջ օրը ցաւով է տեսնում իր Շողիկին, որ կռացած փոքրիկ ուրագի վրայ, գլուխը թաղած խոտերի մէջ, մանր-մանր հարուածներ է տալիս եւ դժուարութեամբ է առաջանում:

Քրտիկը կաթիլ-կաթիլ հոսում է փոքրիկ սիրուն այտերի վրայից, փոշին բարձրանում ու ծածկում է նրա մագերն ու երկայն թարթիչները, բայց աղջիկը շարունակում է քաղհանել, որովհետեւ հայրն ասել է, թէ Վարդավառին նրա համար նոր, վարդագոյն շոր պիտի գնի, խշխշան ու սիրուն: Նա աշխատում է ետ չմնալ ծնողներից, որոնք նրա մանկական փոքրիկ ինքնասիրութիւնը խնայելու համար երկու կողմից օգնում են՝ աննկատելի կերպով առաջի խոտերը քաղհանելով:

Արեւը վերից անխնայ թափում է իր կիզիչ ճառագայթները եւ շոգը գնալով անելի խեղդող է դառնում:

Աւետիս Ահարոնեան << Արագը >>



Ա- Գրողը ինչպե՞ս կը ներկայացնէ գիւղի աշխատանքային վիճակը: Ձեր խօսքը հաստատելու համար գտեք եւ գրեցէք հատուածին սկիզբէն երեք (3) արտայայտութիւններ այս մասին : / 5 նիշ/

Բ- Շողիկը աշխատասե՞ր էր: Ձեր խօսքը հաստատեցէք գրութենէն այս մասին երեք (3) տողեր գրելով: Իսկ աշխատասիրութիւնը ընդհանրապէս դպրոցականներու կամ այս տարիքի անձերու համար կարեւո՞ր է: / 5 նիշ/

Գ- Այս գրութեան ընթերցանութեամբ ի՞նչ կրցաք սորվիլ: Գրեցէք այդ մասին:
(40 բառի շուրջ) / 8 նիշ /

Դ- Զետեւեալ նախադասութիւններուն մէջ ընդգծուած բառերուն տեղ դրեք նոյն իմաստը ունեցող այլ բառ մը: / 3 նիշ/

- Քաղիանը հեշտ գործ չէ:
- Կ'օգնեն անոր աննկատելի կերպով:
- Արեւի կիզիչ ճառագայթները խեղդող կը դառնան:



Ե- Ընտրեցեք ճիշդ բառը եւ դրեք յարմար նախադասութեան մէջ: / 9 նիշ/
Երգիծաթերթեր, <<Թատրոն>> , պիտի խմբագրէ, անմահ, դիտողութիւն,
յառաջաբանը, ազգային, երգիծանքի, կ'անդրադառնանք.

Յակոբ Պարոնեանի հետեւեալ յատկանիշները՝ սուր _____
յեղափոխական սկարագիր, _____ մեծ շնորհք եւ առողջ
դատողութիւն, կը դարձնեն զինք հայ գրականութեան _____
դէմքերէն մէկը: Կարդալով << Ձեռատետրին>> _____
ապա նաեւ քանի մը հատուած գործէն, _____ այս
բոլորին: Հայ կեանքի այս քաջ պահակին աչքը հասած է բոլոր անկիւնները
_____ մեր իրականութեան:
1883- Էն Պոլիս Է, ուր կը նուիրուի լրագրութեան: Ամբողջ կեանքը, յաջորդաբար
_____ ազգային-քաղաքական բովանդակութեամբ
_____ <<Մեղու>>, _____ :
Այս բոլոր թերթերուն մէջ Է, որ Պարոնեան կը հրատարակէ երգիծանքի իր
գլուխ-գործոցները:

2 ՆԻԺԹԻ ԸՄԲՈՒՆՈՒՄ ԵՒ ԼԵՉՈՒԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդալէ ետք հատուածը պատասխանեցեք
հարցումներուն:

<< Պարտեզ եւ Տուն>>



Տունը ուր ծնած եմ, երկյարկանի, փայտաշեն եւ կարմիր ներկուած սովորական տուն մըն էր: Փողոցի վրայ նայող պատուհաններու վարագոյրները գրեթէ միշտ փակ կ'ըլլային, որովհետեւ ճիշդ դիմացը կար յոյն նպարավաճառի խանութ մը, որ միեւնոյն աստեղ գինետուն էր:

Մեր տնեցիները օրը կ'անցընէին ետեւի սենեակները, որոնց պատուհանները կը բացուէին իրարու յաջորդող այգիներու վրայ:

Յետուէն կ'երեւէր նաեւ Վոսփորի կապոյտ, փայլփլուն ժապաւէնը: Անկէ անդին՝

Մայրաքաղաքին ուրուանկարը , ծածկուած փոխնիփոխ վարդագոյն, ոսկեգոյն ու կապտորակ մշուշով, կը թուէր երանգաւոր, երազային երկիր մը: Առաջին տեսողական տպաւորութիւններս կրէր եմ նրբօրէն գունագեղ այդ շրջանկարէն, որ խոր ազդեցութիւն ձգէր է վրաս: Դեռ անգիտակից եւ անլեզու՝ լացեր կամ խնդացեր եմ տպաւորութիւններուս ուժգին յուզումէն, ու յետագային՝ կրկին այդ տեսարաններուն առջեւ՝ զգացեր եմ, որ անոնք արդէն տեսնուած, ընկալուած էին ինձմէ:

Կը յիշեմ առաւօտները, երբ մեր պարտեզները կը դառնային բոցավառ վարդաստաններ: Վարդերը կը խուժէին տուններէն ներս, կը զարդարէին, բոյր ու երանգ կը բերէին ճերմակով պատած սենեակներուն, կը դառնային խաղալիք երեխաներու ձեռքը, անոնց թերթիկները կ'անձրեւէին ամէն բանի վրայ:

Կը յիշեմ գահավեժ էջքը ծաղիկներուն, որոնք ճոխ հագուստներու պէս կը ծածկէին խարխուլ տուններու թշուառութիւնը: Չով զեփիւռը փայփայանքի պէս կ'անցնէր մարդոց եւ բոյսերուն վրայէն, ու անոր հետ նազանքով կը խաղային նորածիլ ոստերը: Արեւին լոյսը մաղուելով ծառերու ճիւղերուն մէջերէն, կը թափէր գետին: Կը յիշեմ ինքզինքս մեր պարտեզի արահետներուն մէջ՝ տոտիկ-տոտիկ քալելով այդ լոյսի բիծերուն վրայ...

Չապել Եսայեան << Պարտեզ եւ Տուն >>



Ա- Չեղիսակը իր մանկութեան, հեռուէն տեսած շրջապատէն ի՞նչ կը յիշէր:
Գրեցէք երկու (2) բան: Յիշեցէք իր տողերը հաստատելու ձեր խօսքը: **/6 նիշ/**

Բ- Մանկութեան տեսողական առաջին տպաւորութիւնները ազդա՞ծ էին իր վրայ:
Իր խօսքերէն փաստ մը գտէք եւ գրեցէք այս մասին: **/6 նիշ/**

Գ- Ծաղիկի կամ ծաղիկներու հանդէպ հետաքրքրութիւն ունե՞ր գրողը:
Չաստատեցէք ձեր պատասխանը հատուածէն երեք (3) տողեր գրելով: **/6 նիշ/**

Դ- Ձեր կարծիքով գրողը կը սիրե՞ր իր մանկութեան անմիջական շրջապատը:
Բացատրեցէք ինչու՞:

(40 բառի շուրջ) **/ 9 նիշ /**

Ե- Չետեւեալ նախադասութիւններուն մէջ ընդգծուած բայերը գրեցէք վնցեալ
վնկատար ժամանակով: **/ 3 նիշ /**

- Ուրախութեամբ քայեցին գիւղի մանուկները դէպի դպրոց:
- Միայնակ կանգնած փողոցին մէջ զարմացած նայեցաւ շուրջը:
- Գիւղացիները առաջնորդեցին հիւրերուն ցոյց տալու հնութիւնները:

3 ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)



Ա- Ներկայացուցեք անձ մը որուն կը սիրէք եւ կը յարգէք իր նկարագրին համար:

(140 բառ) / 20 նիշ /



Բ- Գրեցէք տեղի մը մասին, որ ձեր մանկութեան ինչ-որ պատճառներով ազդած է, եւ մնացած է յիշողութեան մէջ:

(140 բառ) / 20 նիշ /

Ուշադրութիւն դարձուցէք ուղղագրութեան եւ ձեռագիրի մաքրութեան:

Յ Ա Ջ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

ΤΕΛΟΣ ΕΞΕΤΑΣΤΙΚΟΥ ΔΟΚΙΜΙΟΥ